

ՅՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆ

Գ ր ք

ՄՈՎՍԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ ԵՄ ԿՈՊԵԿ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տպ. Ն. Աղանեան, Պոլից. 7

Թիֆ

Լիզ

891.99

2-95

6 NOV 2011

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2.

891.99

7-96 *այ.*

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ

== Տ Ո Ւ Ն

1002
7217

Գ ր Ե ց

Մ Ո Վ Ս Է Ս Դ Ո Ւ Կ Ե Ս Ե Ա Ն Յ



Թ Ի Ֆ Լ Ի 2

Էլեկտրոնայ. օր. ն. Ա. Ղազարյանի, Պոլից. 7

1913

19.06.2013

41002

MS VON 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ

2 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ

Հ Գ Ո Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ



ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆ

Յովէն՝ հարուս ու շատ հին տուն, վասակել
էր մեծանուն,
Սիրելի էր թէ օտարին, թէ գիւղացոց ամէնուն:
Մէ՛ն ախիր ջան մէ՛ն տան միջին քով աւել
վարսունից,
Դոռալ, բոռալ, իրար կանչել, խլանում էր
մարդ ձէնից:
Տունը մեծ ու չափից բարձր, նմանում էր
բլուրի.
Ուտել, խմել, մէ՛ն տեղ քնել՝ է՛ս տան մէջն էր
բոլորի.
Եւ պատերից չորսը տեղով չորս հաս մառան
դէմ ու դէմ,
Շինել էին ցածրիկ ու նեղ, խոր ու խաւար
առանց շէմ:
Միջները կար կար ու կարագ, եղ ու պանիր
եւ հում սեր,
Տաշակները անբաւ պանիր, թան ու մածուն,
մածնի սեր.
Սնդուկները պատասակ են նոր հարսների
շարանով,

Հագուստները կախ կախ սւած կարն ու կտոր
 պարանով:
 Պղինձ, սինի, քաս ու քաբախ, քաւա, եամադ,
 սամավար,
 Ինչքան քեչայ, լաւ խալիչայ, մեծ մեծ կարպէս
 նոր նկար.
 Զուխայ, Շալվար, կօշիկ, քեամար՝ համ ոսկեղէն
 համ արծաթ,
 Ոսկի, քովի, մանեակ, օղակ, քանի քեսակ
 ամանաք:
 Կանանց շորեր խաս ու դումաշ դուրքի ու շամ
 հին կապա,
 Խրխա զբուն, դէյրա, կովթա, իւպկա, կուրկա,
 լաւ արա.
 Ամեն հարսին ջոկ ջոկ կապած սնդուկներում
 բողջա ծալ,
 Այ բաղդադին ու խաս փուշին, Ինչքան քիւմիւր,
 դրափ, Շալ:
 Իսկ գոմերի վեցը սաւրի, լծկան մալին իրար
 մէջ,
 Ծնած կովեր, քունջի էրինջ՝ կէսը փորով, կէսն
 ստեղ.
 Քեահլան, Խորդա լաւ լաւ ձիեր ու սմբըլիկ
 գեր էներ,
 Մասակ, գեասակ, մազանդարան, բուխ ու
 շէկիկ գոմէներ:

Ոչխարը խօմ՝ կուռիկ, կեալիկ ջուխս նուրբով
 ջորս հարիւր,
 Կեալիկ, չալիկ, բաջիկ, բալիկ, սաչաղ քրդով
 սեւաթոյր.
 Բուրդ ու դրքիկ խուզած գգած, բարձր դարսած
 խոսի դէգ,
 Իրանք կարօտ շանու մսի՝ գայլը կանէ
 ողջակէզ...
 Յովէի տունը պզտի տուն չէր, պէտք է ասել
 նրան վանք,
 Փարքամ կայքը միանգամայն հեռուն կուտար
 արձագանք.
 Մալ ու ապրանք լամբառ սւած խառնափնթու
 դուռն ու դուրս,
 Հօտաղ, մեակ հա կաշխասին նրազը վառ
 մինչի լուս:
 Յովէն ունէր մեծ ու պզտիկը վեց հաս կարգած
 եղբայրներ,
 Վեց հաս ասլան, վեց հաս դափլան՝ կրփօրէին
 լեռ քարեր.
 Սարում, ձորում հա կաշխասին չօլում գետին
 առանց տուն,
 Դէսից դէնից քեար կրհանեն առանց դադում,
 առանց փուն:
 Յովէն գեղին իրաւասու ու գեղական
 պաշտօնեայ,

Վախս գլաին, վախս դասաւոր, վախս սբօրչիֆ
 ու ֆեանեայ.
 Թէ պատահմամբ ինքը դուրս գար թիֆեան
 անուշ պատշօնից,
 ձարահասեալ մէկը կեղներ էրէցփոխան էդ
 սանից:
 Մէկն էլ յօշաղ ման էր գալիս, թիկնապահ էր
 աղբօրը,
 Սուր ու խանչալ վրէն կապած կոկիկ հագնւած
 շորը.
 Շատ գեղացի աչքը կուտար Յովէ ֆօխովի սան
 կարգին,
 Դամ ու դագճեան մալին, հալին, սան շէկըրկին
 ու սարփին.
 Ու համաւա քերը կախ մեղմ ու համեստ
 պլպլան,
 Կրանը բօ՛լ, առու ունին ու կըվազէ զլզան:
 Բան պակաս չէր. օձի հաւկիթ ու հաւի կաթ
 կընարւէր,
 Յովէն՝ խելօֆ փորձառու մարդ, ամենի հետ
 կըվարւէր.
 Հալան հօթան հին դովլաթը մեծ ծովի պէս
 քող տւած՝
 Նորն էլ կուգայ անուշ համով գաթա, հալվա,
 լօշ թխած:
 Տունը հարուստ, գործը յաջող, ձեռքը բաց ու
 սիրտն առաս,

Դրկիցներէն ով ինչ ուզէր, շաբթով կուտար
 ամանաթ...
 Տունը շէն ու դովլաթը շատ՝ հա անունը էղաւ
 լաւ,
 Ում որ դիմէց ու հարս ուզէց, չէ բառ չէղաւ,
 յաջողաւ:
 Զահիլ տղոց ծախսեր արաւ ու նշանէց հա՛
 կարգէց,
 Զուգս ու զիննաթ ամեն հարսին առաւ, դգէց,
 ուղարկէց.
 Ապրան մէ վախս խառնաւճփոք ու շամաթով,
 կլանչով,
 Յօղաւ ու տուն բօլուկ բօլուկ հարս ու աղջիկ
 ու մանչով:
 Կնանիքը թուով կեղնին մեծ ու պզտիկ
 տասնուվէց,
 Ուրը հարս են, վեցը միջակ տեգերոյ կին, երկու
 մեծ.
 Տասը օրօցֆ օրօրում են տունն ու յօղէն մէ
 գլուխ,
 Որին կաշեն հա ծիծ կուտան՝ որն էլ անէր,
 բարձի քող:
 Յովէն ջոկէց, սիրուն սիրուն աղջիկներից հարս
 քերէց,
 Համ հարամկեր, համ կուտաւ, համ լեզւանի՝
 իրար ցեց.

Ձեր մասիլը օձի փուռ է, շան արուն է ու
 ծով է...
 Հոգիդ հոգու չխառնի, ի՞նչ ես եղել ձուր ու
 փիս,
 Որեղ կայնիս, ուր որ երթա՜ս հա՛ կըխօսիս
 իմ շփս...
 Ուրը հարս ենք, վեց էլ կնիկ միջահասակ,
 երկու ծեր.
 Մէկը մէկից եխան վերան, իրդու չալալ
 սնաւէր,
 Թոկից փախած ալիզանկի, ձձում հեծնող
 անհոգի,
 Հերիք չալես գունդի դայդա, կոխ, դաւի
 նորոգի...
 Քու հարսները ինչ օր կենեն, ինչ ու լռէ,
 պարսակէ,
 Գուն էլ տունը քանդէ՛, հորթէ՛, քեռէն ալէ՛,
 դարդակէ՛.
 Մենք օր կուգանք գողտուկ այան, մէ փուչ
 բանի ձեռ կուտանք,
 Վա՛յ կըբռնաք, Սալվին գողցաւ, եղը տարաւ,
 քանդուանք.
 Երթա՛մ բանամ, սնդուկները գողցած շէյր
 թեղ անեմ,
 Մոթալներով պահած պանիր, բուրդ ու կծիկ
 թել հանեմ.
 Ման ու փոխը միանայ է, տունը քցիք սրարից,

Հա կըծախէք ձեռ ընկածը բիլա ցան ու
 սրարից...»
 — «Ձերն հասաւ վերի տունը, քափան կանայք
 քաւաւի,
 Պառաւ Սկէն բռնած Սալվու ծամերիցը
 կըբաւի,
 Բուլք բուլք եղան, բօլուկ բօլուկ կիսկաւան,
 Ինչ որ ըսես առաջ բերին, տուր թէ կուտաւ ու
 կուան.
 Սկէի հարս Սանամն յէլաւ չար ու չամբար ետ
 արաւ,
 Կոխ քցեց գող Սալվու հետ խօսելով զահիւս
 տարաւ.
 Սալվին բերեց իր մազերից դօշին գրեց սազ
 արեց.
 Հարս Սանամը աւեց ինչա՛ս իրան ծալեց, տազ
 արեց,
 Սալվին իրան արտում պահած տարիներով փոխ
 ունէր,
 Խռոված էր իրան մարդուց, փարդակալած
 սուգ ունէր.
 Ու գայրացած՝ բացեց խօսքի տպարակներին
 բերանը,
 Չունքի վաղուց Սալվու ջանին հասցրել են
 վարամը.
 — «Սեւին մօրն դու մեր տունը ոտնակոտոր
 հարս գայիր,

Գէշ բաներ ու չլսածներ պզտիկներին դաս
 քայլեր...
 Էրածներդ կրճատեմա՞ս, ի՞նչ ես շինել տարիքով,
 Մարդս զարթիր, անառ ու փիր տունը լցիր
 չարիքով...
 Քամբախ եղնի ըսման տունը, էս խօսմ տուն
 չէ, շան բուն է,
 Դուք էլ գիտէք էստան ջանով մէ՛ տեղ կապրիք՝
 անո՞ւն է.
 Զէ՛, ես գիտեմ, ինչե՛ր կեղնի էս վերանայ
 ծածկի տակ,
 Թո՛ղ կործանւի էսպէս տունը ու անունը
 հիմնատակ:
 Գէլ ու գազան հարամգաղա ժողովել էք մէ՛
 տնում,
 Ինչ՝ որ առնէք, ինչ՝ որ ուտէք, մէջտեղը կայ իմ
 ու տնում.
 Մէյլա առնին՝ քողէ՛ք, տղես քող կուտես ուտէ՛
 հալ չունի.
 Ճոք կրքերեն սեւ ու լաւտիկ՝ «սէ՛ք ընծի, խալ
 չունի»:
 Թէ հաց ուտենի՞ հարա՛մ, վարա՛մ ու կիսափոր
 շան միս է,
 Բրդի վախճը՝ «ծէրքը ընծի», մնացածն էլ
 կրկիսէ:
 Թել ու ասեղ, մասնիք, մասնոց կառնիս հարսիդ
 լայեղին,

Հաւ ու հաւկիթ կեփես կուտաս իլսոս, բոսոս
 բու տղին,
 Լէնք ու յերկէնք չափես, ձեւես, կտրես, կապես
 բու կամփով,
 Եբօր կուգայ արէն մեզի՝ հացը կուտաս
 համբանով...»
 — Սալվու կէտուր Սալգուլն էկաւ, հարսի
 կողմից մէջ ընկաւ,
 Սարփա, եաւաղ արեց, քափեց ու կասողեց,
 լիոռտաւ.
 — «Քեա՛ւքառ Սկէ, ի՞նչքան հօտաղ, դարիք
 մշակ խաբեցիր,
 Արուն-հրփինք առած հախը պահիր բովդ,
 լափեցիր...
 Ի՛նչ քորամայ հարսներ ունիս, առով, եօլով,
 նամուսով,
 Հարսիս վրէն կուի կու գաք հարս ու կեսուր
 էրկուսով.
 Մազդ կտրեմ, տունս քալնիր, ձէն չեմ հանե՛
 դո՞ւ կենես.
 Բօյի՛դ աւէ, բուսի՛դ աւէ, գիտես քէ մէ՛ մեծ
 բա՞ն ես:
 Դուրսը կելնես խախք ու առակ ու խայտառակ
 տուն կուգաս,
 Քու աչերու գերանը քող՝ մագս չափէ մաս ու
 մաս.

Առաջ հարսդ հըլա գաթէ, հերիք քանդէ իմ
 տունը,
 Նամուս կորանք, դիօթի շուն, կորուց մեր տան
 անունը...
 Տա՛ր, անգգամ, գետին հորէ իշխան մարդուդ
 փափախը,
 Յետեւ արի կռիւ կայնի, սրսիս քաշէ խաչ
 դաղը:
 Մէրիկ, քուրիկ, հարկ ու հարսնիք քու օբարից,
 քու փայից:
 Մարդդ իշխան, ետ չի կայնի կերից, խմից,
 սըրայից,
 Քու տղերքը լիկի-լաւանդ, չաքու քեանան, լափազան,
 Արուն խմող, գող ու կպնող, մարդասպան, լիքք
 գազան:
 Աղջիկներդ գոթի քամքալ, անքան, սարի
 եապանի,
 Պուն էլ ի՞նչ ես, հողս գլխուդ, լաւ լայեղ ես
 չոբանի:
 Հարսս բիրդան էկաւ մառան, եղամանին ձեռ
 տաւ,
 Ըսինք գողցաւ մէ գտալ եղ՝ ըտով տունդ
 քանդաւ,
 Կատուն քցիւ ճապկիդ ծոցը, հանկոճելով ման
 կուգաւ,
 Քոտա՛ս, նվաս ու կոռոտաս, մագ փէտուկով
 սուտ կուլաս:

Քաղաւորի հետ փոցիս քաշող, իմ արիւն է
 աշխատող,
 Կալ ու աշան, քեղ ու դարման քէջի մաղին
 լաւ դաղող:
 Արք չալլին, բանջար քաղին, գլխում բերին,
 գլխաւ,
 Տուրտուրով իմ արեղիս կերածն էրիւ լափ
 ու լակ:
 Սեւին, մքին էղնի էսպէս արունքաքախ
 ապրուսը,
 Գետին մանին մեր մարդիկը, ըտման տունը,
 հարուսը:
 Ինչի՞ս պէտք է օղի լեակեան, եքօր մէջը
 արուն է:
 Ինչի՞ս պէտք է վառ օջախը, սրսիս վրէն սառ
 ձուն է...
 Քու տղերքը մանուտ չուխով, լաւ լաւ փափխով,
 եափունջով,
 Մենք ման կուգանք բոբիկ, չալախ ու
 անքումպան հին գնջով:
 Սկէ՛, Սկէ՛, արեւն անցաւ, գնաց, գէշ տեղ մէր
 մաւ,
 Չեռիդ քարը շատ ման ամիր, քարկիր ու տեղը
 քտաւ...
 Կանչէ՛ մարդդ, մալը քածնէ, մեր փայլ տայ
 հօթ ու կէս,
 Հէջիգ եղայ քու սիճաքէն, հերիք եփես, երեցես:

Ես ի՞նչ կենեմ շնոր տունը, կուիմ թէ չէ՛ սուր
 ու բուր,
 Եսեւ կերայ, սարիս անցաւ, միշտ խմածս
 արնջուր»:
 —Քոռաղաղի մութը ընկաւ, նրազ վառին
 իրիկըւան,
 Տղամարդիկ թոփ թոմարի բիրդան էկան տուն
 ընկան.
 Սկէէն գնաց գանգաս էրաւ սոս ու օղորդ
 մէկին տաս,
 Մեծ ու պզտիկ տունը խառնեց, էլ չջոկեց խամ
 ու խաս:
 Տղամարդիկ սուսիկ փուսիկ գլուխը կախ
 լսեցին,
 Քեօշա պունախ զգգզացին, քապսիր տեսան,
 սուեցին.
 Մէյդան էկաւ Սարվու մարդը, տունը մաղեց,
 փարմաղեց,
 Կոիւն ընկաւ տոց մէջը, եամա՛ն, կոիւ
 կասաղեց...»
 —«Էս ի՞նչ դաւի դառաբայ է, դալմաղալ ու
 շամաքա,
 Լաչակ պասոել, գլուխ կոտել, ափեղցփեղ
 խօրաքա.
 Օձի ձագեր ու կարիճներ, գետօրէգետի
 զաւակներ,
 Չեր մարդիկն են սրել ձեզի ազիզ բալի գլխակեր...»

—Սանամի մարդ Սերոբն էկաւ, ձեռքը դրեց
 խանչալին,
 Պառաւ Բէշոն միջնորդ ընկաւ, տոց մէջը
 խղճալին.
 Մէ խմրուղով զարկեց պառսին, ուշագնաց
 գլուխը,
 Տունը ընկաւ ալալորում, մեծ ու պզտիկ
 խառնեց:
 Տնով փուլի արափացի սին, տան մէջ չարդան,
 Ծուլ արունով տղայ, աղջիկ, հարս ու կնիկ
 ներկան.
 Յովէն գոռաց. «Խրար բրդիք, մորքիք, չարդիք,
 հերիք է,
 Օրէս յետեւ կուիւն ի՞նչ է, կուիւն տո՛ւն կրճիգէ:
 Դուք կուեղուն՝ բունէք, խեղդէք չարագործին,
 գող հարսին,
 Ընչի՞ գնաց, ձեռքը փցեց կովի եղի կարասին...
 —«Փափխովդ մէկ անուշ կուտես, որ բան կըսես,
 քե՛օպակ տուն...»
 Սաղաւն յէլաւ չուղաք տեց ու պահպանեց
 հարս Սարվուն.
 —«Մանկութիւնից տունը, դուռը գիշեր ցերեկ
 ցանիւր փուշ,
 Հիմի էկել ցո՛րեն կուգես, հասկը խոռո, հացն
 անուշ...
 Տուն տնովի մօր ծիծ կտող, հարամ կաք ու
 հարամ խոռ,

1002
 1002
 1002

Ծեր ու մանուկ, հարս ու տղայ, ու բիրադի
 պապ ու թոռ:
 Եւրաք կերա՛ք, էսփան տարի ձեր տան մէջը
 հալալ հաց,
 Մէ օր կե՞ղնի բան չմնի, էս քամբախսը
 գողացւած.
 Հաւ ու հաւկիթ, հորթ ու մոզի, ոչխար ու գառ
 գողանալ.
 Տներ քանդել, ամբար ճղել, փող փախցնել,
 հոր բանալ...
 Ղարաւուլին քամբէն էրի՛ք՝ զա՛րկ ու չնթէ՛,
 մեզի՛ բեր,
 Համ նախըջուն, համ դօռուղջուն, սրի՛ք. դրի՛ք
 ձեզ ընկեր,
 Հորթարած ու չոբան չօլլուղ վախս ու
 բէվախս անդադար՝
 Թախ քափեցի՛ք ու քալնեցի՛ք, գեղը հանի՛ք
 պլո՛ւս ծառ...
 Ձեր անունը սուրբ հանեցի՛ք, գառի մասաղ
 հաւեցի՛ք,
 Թայնա տեղը է՛քը սաղ սաղ կուլ տւեցի՛ք,
 մաւեցի՛ք.
 Էլ մարդ մնա՞ց, թուրքի, քրդի, քաթ ու մուրսառ
 նասրանի,
 Չհանչնա՛ք աշխարաւեր, հարամի՛քն անւանի...
 Թէ՛ իշխան ես՝ հարկիդ կեցի ու հասակդ
 ամնչէ՛,

Գողաղա՛րան, մեղաբերան, հե՛րիք, պաշխո
 նանչէ՛.
 Կեղի մէջը ինչ օր կորի, փոկդ, փօշեղ
 պահւած է,
 Կկռալով պիտի մեռնիս, հոգիդ կպրով
 շաղւած է.
 Թուփեան դրի՛ք, խեղճ գեղացուն քալան տի՛ք
 բէխաբար,
 Քիւմիք բերի՛ք, արաղ փաշի՛ք, ու չուր ծախի՛ք
 մուղարար.
 Էս ասենը զնաց, կորաւ, մնաց մենակ իմ
 հա՞րսը,
 Վերջը կոտորի՛ք հարսիս գլխին կուժ ու կնուն,
 կարասը...
 Սկէն յէլաւ կռիւ քցեց, սիրքը հովցաւ,
 դադարաւ,
 Բռնեց անմեղ հարսիս ետիւն ու անունը չաւ
 արաւ:
 Ախով վախով անցնի օրդ, սի՛րսդ անւնայ, սե՛ւ
 Սկէ,
 Ղաւիլ դադէն բռնէ կողքէդ, հոգիդ մե՛կ ու
 ներկէ՛:
 Էսփան ջանով մէ տուն ապրել օչխրի պէս,
 ի՞նչ բան է,
 Շատուր, շուր՝ ի՞նչ լազաթ է, քամբխելու
 նշան է.

Ձերը էդ է, բուր ու մարթալ, փէս ու խանչալ
 հազրած
 Քա՛նի հոգի, վեր քցեցիք կոսրած, ջնջխած,
 ջարդւած:
 Ա՛խ իմ մարդս, ա՛խ իմ մարդս, ե՛ք կեղնի
 օր, հասկընայ,
 Աւեր սնէն, արնծովէն, փաւի մէ դի հեռանայ.
 Ձահր ու գխում, աղ ու աղջուր էղել է մեր
 կեանքը,
 Արուն քարախ, կիր ու կրակ, վահր ու վարամ
 մեր հացը»:
 — «Դո՛ւք ետվաւէք, նւանց կուտամ իմ ու բուկի
 սեւ օրը,
 ձլխեմ, փամեմ, հոգի հանեմ, անհաց քոյեմ
 ձեր փորը.
 Շունք պառկել սէլի հովը, գիտէ շուք իրա՞նն է,
 Յովէն գիտէ ինչո՞ կենէ, թո՛ղ գայ օրը՝ իմ
 բանն է»....



Ընկերութեան հրատարակութիւնները

1. Լ. Ուօլլէս. Բէն Հուր. հ. 1. Թարգմ. անգ.
 Փ. Վարդանեան. — 75
2. Նոյն, հ. II. — 75
3. Շիրվանզադէ, Արախտը. — 25
4. Մուրացան. Գէորգ Մարգարտունի, պատմա-
 կան վէպ 1— 20
5. Ժուկովսկի. Քնած արքայադուստրը, պատ-
 կերազ. հէքիաթ. փոխադր. Աթ. Նուկոյեան. — 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմաճիւղներ . . . — 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ. 1— 20
8. Ն. Բուբակին. Ստորերկրեայ կրակ. պատ. — 50
9. Զ. Դիկկենս. Դաւիթ Կօպալէրֆիլդ. պատկ.
 վէպ. մասն առաջին, անգլ. թարգմ. Փ.
 Վարդանեան — 75
10. Նոյն, մասն երկրորդ — 75
11. Նոյն, մասն երրորդ — 75
12. Շիրվանզադէ. Երկերի ժողովածու, հատ. IV 1— 50

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԱՆԱԿԱՆ 1912

- № 1. Գաբրիէլ ԴԱՆՈՒՆԵԽԻ. Զիօկօնդա. ողբ. 5 ար.
 Փրանս. թարգմ. Ս. Յակոբեան:
- № 2. Իլիա Ճաւաւաճէ. Մուրացկանի պատմածը.
 վրաց. թարգմ. Տ. Փիրումեան:
- № 3. Ա. Ահարոնեան. Աստծու կրակը:
- № 4—5. Իւշկէիշ. Թագաւոր. ուս. թարգմ. Յ. Յով-
 հաննիսեան:
- № 7. Սէյրի. Ծիլ ու Ծաղիկ.
- № 8—9. Կոմս Ա. Կ. Տօլստոյ. Իօանն Ահեղի մահը.
 ողբ. 5 ար., ուս. թարգմ. Տ. Յովհաննիսեան:
- № 10. Անտոն Զեխով. Պատմաճիւղներ. ուս. թարգմ.
 Ռ. Նան-Աղատ:
- № 11-12. Ա. Ս. Դրիբանդով, Նիկիթի պատուհաս, կոմ.
 չորս գործ. ոտանաւորով. թարգմ. Լ. Մանուէլեանի:

1913

- № 13. Լորդ Բայրոն. Մանֆրէդ. Անգլիերէն բնագրից
 թարգմանեց Տիրայր վարդ.

ԻԻՐԱՔԱՆԶԻՐ ՀԱՄԱՐԸ 1

ՀՀ Ազգային գրադարան



NL0350188

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1.	Զարաբաստիկ թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան	— 8
№ 2.	Նահապետական տուն, Մովսէս Ղուկասեանց	— 5